

ԴԱՏ 1.7. Ռուսաստանի Դաշնություն: Տնտեսությունը

• • •

ՌԴ տնտեսության խառը կառուցվածքը համեմատում են շենքի հետ, որի յուրաքանչյուր հարկ առանձնանում է իր հիմնախնդիրներով և դրանց առանձնահատկություններով, բնական, աշխատանքային և գիտատեղեկատվական ռեսուրսների կապերի բնույթով և այլն: Այն շատ ինքնատիպ է և զարգացել է շատ անհամաչափ:

• • •

Ի տարբերություն մի շարք զարգացած երկրների, Ռուսաստանի տնտեսության զարգացման մեջ մեծ դեր են կատարում և՛ արդյունահանող, և՛ վերամշակող արդյունաբերության ծյուղերը, իսկ գյուղատնտեսությունը մեծապես կախված է բնության «քմահաճույքից»: Եթե զարգացած երկրներում տնտեսության արտադրական ոլորտում զբաղված է տնտեսապես ակտիվ բնակչության մինչև 10%-ը ապա Ռուսաստանում այդ թիվը գերազանցում է 30%-ը: Բացի այդ, այս ոլորտները շատ աշխատատար են և պահանջում են մեծ ներդրումներ:

• • •

Կոնցեռնի մեջ մտնում են նաև գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտիվ մշակումների համակարգեր), ստեղծվել են ֆինանսաարդյունաբերական խմբեր: Այսպիսով մանր և միջին ձեռնարկությունների հետ մեկտեղ ձևավորվել է փոխկապակցված խոշորագույն ձեռնարկությունների և բանկերի համակարգ:

ՌԴ-ն ունի բազմաձյուղ արդյունաբերություն, որի ստորին հարկը ներկայացնում են հարուստ ու բազմազան բնական հարստությունների արդյունահանումը (օգտագործումը) և վերամշակումը: Հաջորդ հարկերում բնա-

կան գործոնի դերը նվազում է և մեծանում է բնական ռեսուրսների խոր և բազմակողմանի վերամշակումը և պատրաստի արտադրանքի ստացումը: Հատուկ նշանակություն են ձեռք բերում սոցիալական գործոնները՝ գիտությունը, աշխատանքի և հանգստի որակը: Տնտեսության շենքի վերին հարկում են գիտությունը և գիտատար արտադրությունները: Այսպիսով, ներքևից վերև աստիճանաբար նվազում են բնառեսուրսային համակարգի արտադրությունները, վերևից ներքև՝ գիտատեղեկատվականը: Հարկ է նշել, որ վերին հարկերի զարգացմանը նպաստել են ԱՏԳ-ները (Ազատ տնտեսական գոտի): Կյանքը ցույց է տվել, որ ԱՏԳ-ները արագացնում են գիտատեխնիկական առաջընթացը, երիտասարդ ձյուղերի աճը և ակտիվացնում արտաքին տնտեսական գործունեությունը:

• • •

Այն էլեկտրաէներգետիկայի և քիմիական արդյունաբերության հետ (արդյունաբերության առաջատար եռյակ) որոշում են գիտատեխնիկական առաջընթացը, զարգացման մակարդակն ու տեմպերը, երկրի պաշտպանունակությունը, բնակչության կյանքի որակը: Մեքենաշինությունը ունի ցրված տեղաբաշխում: Համալիրը թողարկում է սարքավորումներ, հաստոցներ, գործիքներ, ռազմական մեքենաներ և այլ արտադրանք: Գյուղատնտեսությանը և էլեկտրաէներգետիկային ապահովում է մեքենաներով, սարքավորումներով, գործիքներով: Մեքենաշինության ձյուղերը անընդհատ կատարելագործման միտում ունեն:

• • •

Մեքենաշինության աշխատատար ձյուղերը տեղաբաշխվում են այն շրջաններում, որտեղ կա աշխատանքային ռեսուրսների մեծ կենտրոնացում: Բարձր աշխատատարությունը բնորոշ է հաստոցաշինությանը՝ **Մոսկվա**, սարքաշինությունը՝ **Վորոնեժ**, **Պենզա**, **Ռյազան**:

Մետաղատար ձյուղերը ձգտում են դեպի մետալուրգիական բազաները: Խոշոր ձեռնարկություններ կան **Ուրալում՝ Եկատերինբուրգ**, **Սիբիրում՝ Իրկուտսկ**, **Կրասնոյարսկ**:

• • •

Նավթի և գազի հանքավայրերի շահագործմանը զուգընթաց ածխի բաժինը վառելիքաէներգետիկ արդյունաբերության մեջ նվազել է, չնայած երկրի արևելյան շրջաններում պահանջարկը դեռևս շատ բարձր է: Ածխի

մի մասն (կոքսացող ածուխը) օգտագործվում է սև մետաղաձուլության և քիմիական արդյունաբերության մեջ: Ռուսաստանի արևելքում ածուխը արդյունահանում են հիմնականում բաց եղանակով, ինչը մեծ վնաս է հասցնում բնությանը: Գլխավոր ածխային բազաներն են **Կուզնեցկի, Կանսկ-Աչինսկի, Պեչորայի** ավազանները, որոնք իրենց բնութագրերով էապես տարբերվում են մյուսներից:

• • •

Պետք է նշել, որ Ուրալի հանքավայրերի պաշարները չեն բավականացնում և երկաթաքար ներկրվում է Ղազախստանից, Կոլա թերակղզու հանքավայրերից, ԿՄԱ-ից, իսկ կոքսացող ածուխը բերվում է Կուզբասից:

Կենտրոնական բազան օգտագործում է նաև Կոլա թերակղզու և Կարելիայի երկաթաքարի պաշարները:

Կենտրոնական մետաղաձուլական շրջանում օգտագործվում է Պեչորայի ավազանի ածուխը:

• • •

Ռուսաստանի քիմիական արդյունաբերության զարգացումը մեծապես կապված է նավթաքիմիայի հետ: Ուստի այն ձգտում է դեպի նավթաբեր շրջաններ՝ Պովոլժիե, Եվրոպական կենտրոն:

Քիմիական արդյունաբերությունը մեքենաշինության և էլեկտրաէներգետիկայի հետ մեկտեղ մեծ դեր ունի երկրի գիտատեխնիկական առաջընթացի ապահովման գործում: Ճյուղի զարգացման կարևոր նախադրյալ է հանքահումքային անսպառ բազան: Արժեքավոր հումքը նավթն է:

Հանքաքիմիական արդյունաբերությունը տեղաբաշխված է հանքային հումքի արդյունահանման շրջաններում՝ **Կոլա** թերակղզի (ապատիտներ), **Ուրալ** և **Պովոլժիե** (կալիումական ու կերակրի աղ՝ **Սոլիկամսկ**, կալիումական պարարտանյութերի արտադրություն) և այլն:

Օրգանական սինթեզի քիմիան օգտագործում է նավթ ու գազ, ուստի ճյուղի ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են **Պովոլժիեում, Արևմտյան Սիբիրում**:

Ազոտական պարարտանյութերի արտադրության մեջ օգտագործվում է բնական գազ: Ձեռնարկություններ կան **Չերեպովեցում** (կոքսաքիմիա): Ֆոսֆորական պարարտանյութեր արտադրում են **Վոսկրեսենսկում**,

Տոլյատիում, Պերմում:

ՌԴ-ում զարգացման բարձր մակարդակ ունեն նաև քիմիական արդյունաբերության բարդ ճյուղերը՝ պոլիմերային նյութերի քիմիա (պլաստմասսա, կաուչուկ) և պոլիմերային նյութերի վերամշակման քիմիա:

Անտառային արդյունաբերությունը բարձր և բազմակողմանի զարգացած ճյուղ է: Ռուսաստանի անտառային տնտեսությունը ամբողջությամբ ապահովված է համաշխարհային նշանակություն ունեցող սեփական ռեսուրսներով, որոնք օգտագործվում են փայտանյութի, թղթի, ցելյուլոզի, սպիրտի արտադրության համար: Անտառապատ է ՌԴ տարածքի 45%-ը:

Թեթև արդյունաբերությունը խիստ համակենտրոնացված է: Ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են Մոսկվային հարող շրջաններում: Որպես հումք օգտագործվում է ինչպես տեղական այնպես էլ ներկրվող բամբակը, բուրդը, մետաքսաթելը: Մեծապես օգտագործվում են նաև տեղում արտադրվող վուշը և քիմիական մանրաթելերը:

• • •

Անասնապահության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է: ՌԴ-ում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը վերջին տարիներին զգալիորեն նվազել է (27 մլն գլուխ): Անտառային գոտում (հյուսիսային կերային բազայի վրա) և խտաբնակ շրջաններում զարգացած է կաթնատու, իսկ տափաստանային գոտում՝ կաթնամսատու ուղղությունը:

Խոզաբուծությունը զարգացած է հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի մշակության շրջաններում (մշակաբույսերի թափոնների բազայի վրա) ու խոշոր քաղաքների մերձակայքում սննդարդյունաբերության թափոնների և բնակչության սննդի մնացորդների բազայի վրա:

Ոչխարաբուծությունը ունի հսկայական տնտեսական նշանակություն՝ բուրդը արժեքավոր հումք է տեքստիլ արդյունաբերության համար: Ճյուղը զարգացած է հիմնականում երկրի չոր տափաստանային, կիսաանապատային և լեռնային շրջաններում: Եվրոպական մասի և Սիբիրի հարավում բուծում են նրբագեղմ տեսակը: Ոչխարաբուծությունն ունի բացասական դեր՝ երկրի մակերևույթի փոփոխման առումով: Ոչխարների մանր կճղակները արմատախիլ են անում խոտաբույսերը՝ նպաստելով այդ հողերի քայքայմանը և տեղատարմանը (**էրոզիա**):

Թռչնաբուծությունը զարգացած է մերձքաղաքային տնտեսություններում, ձիաբուծությունը՝ Եվրոպական մասի հարավում, **Ուրալում, Ալթայում**, եղջերվաբուծությունը՝ Եվրոպական մասի և Սիբիրի հյուսիսում:

• • •

Մայրուղիներից ամենախոշորը Անդրսիբիրյան (կամ Անդրսիբիրի) մայրուղին է, որը ձգվում է Մոսկվայից մինչև Խաղաղօվկիանոսյան ափ՝ Վլադիվոստոկ: Հայտնի երկաթուղի է Բայկալ-Ամուրյան մայրուղին (3500 կմ): Այն ձգվում է Արևելյան Սիբիրից (Ուստ-Կուտ) մինչև Հեռավոր Արևելք (Ամուրի Կոմսոմոլսկ) և կառուցվել է այդ գոտու յուրացման և սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով:

Խորհրդային միության փլուզումից հետո մի շարք խոշոր երկաթուղային մայրուղիների որոշ հատվածներ հայտնվեցին այլ երկրների տարածքում:

Հայաստանի համար հեռանկարային է Աբխազիայի և Վրաստանի տարածքով անցնող երկաթուղագծի միջոցով կապ հաստատելը Ռուսաստանի հետ: Այդ երկաթուղին վրաց-աբխազական պատերազմից հետո դադարեց գործել:

Ավտոմոբիլային տրանսպորտը բարձր ինքնարժեք ունի, բայց բավականին արագ է և բեռները փոխադրում է «դռնից դուռ» (բացատրե՛ք): Ավտոմոբիլային տրանսպորտի դերը մեծ հեռավորությունների վրա բեռնափոխադրումների մեջ մեծ է հյուսիսային, արևելյան ու լեռնային շրջաններում, որոնցում տրանսպորտի ցամաքային տեսակները բացակայում են: Ավտոմայրուղիները ճառագայթաձև դուրս են գալիս Մոսկվայից: Ավտոճանապարհների որակը հիմնականում ցածր է:

• • •

ՌԴ-ն տնտեսության կառուցվածքով համարվում է խառը տիպի անցումային տնտեսության երկիր: Բանն այն է, որ 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո նրա կազմում գտնվող բոլոր հանրապետություններն անկախացան և սոցիալիստական պլանային տնտեսությունից աստիճանաբար անցան ազատ շուկայական հարաբերությունների: Այդ երկրները թեև ունեն տնտեսության զարգացման և տնտեսության կառուցվածքի էական տարբերություններ, բայց նրանց շարունակում են անվանել անցումային տնտեսության երկրներ:

• • •

Ներկայումս պետական սեկտորի մի շարք համալիրներից ձեռնարկություններն անցել են տնտեսական անկախության, և ձևավորվել են **կորպորացիաներ** (ձեռնարկատիրական գործունեության ձև, որտեղ առանձին ձեռնարկություններ իրենց սեփականության բաժինն ունեն: Դրանց կա-

ռավարումը իրականացնում են հատուկ բարձրորակ կառավարիչներ՝ մենեջերներ), **կոնցեռններ** (ինդուստրիալ կորպորացիայի տեսակ, որտեղ բարձր համակենտրոնացված բազմաձյուղ միավորումն ունի ֆինանսական ռեսուրսների բարձր կենտրոնացում և միասնական գիտատեխնիկական քաղաքականություն:

Տնտեսության զարգացմանը մեծապես նպաստել են ռուսական տարբեր արտադրատեսակների նկատմամբ մեծ պահանջարկը համաշխարհային շուկայում, հանքային հումքի բազմազանությունը, առատությունը և բարենպաստ տարածական գույքորդումները, էներգակիրների, պատրաստի արտադրանքի արտահանումը այլ երկրներ:

• • •

Ռուսաստանի վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը ամբողջությամբ հենվում է սեփական ռեսուրսների վրա: Նավթի պաշարներով (20 մլրդ տ), Ռուսաստանը աշխարհում գրավում է 2-րդ տեղը՝ զիջելով Սաուդյան Արաբիային, իսկ հանույթով՝ առաջին տեղում է: 2005թ. շահագործվող հանքավայրերում հանքանյութի կեսից ավելին արդյունահանվել է, սակայն ժամանակակից սարքավորումների բացակայության պատճառով հանքանյութի մի մասի կորուստ է լինում:

• • •

Նավթ հայտնաբերվել է նաև Բարենցի և Օխոտի ծովերի շելֆում, որտեղ նավթի արդյունահանումը բարդանում է նաև նրանով, որ շելֆային գոտում է կենտրոնացված կենդանական աշխարհի մեծ մասը:

Նավթավերամշակման ձեռնարկությունները տեղաբաշխված են սպառման վայրերին մոտ՝ երկրի եվրոպական մասում: Սակայն այսպիսի տեղաբաշխումը արդյունավետ չէ: Ձեռնարկությունները դժվար է ապահովել հումքով, ջրով, էլեկտրաէներգիայով: Մեծ են էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք ուղիղ սպառնալիք են ստեղծում նաև բնակչության կյանքի համար: Բացի այդ, դրանք սպառողից հեռու են գտնվում: Ռուսական նավթի թերություններից մեկն էլ դրա որակն է: Եթե Պարսից ծոցի ավազանում արդյունահանված նավթի 1 տ-ի 90%-ն է համապատասխանում համաշխարհային ստանդարտներին, ապա Ռուսաստանում՝ դրա կեսը:

• • •

Վառելիքային և ջրաէներգետիկ հարուստ պաշարները նպաստել են

Էլեկտրաէներգետիկայի զարգացմանը: Արտադրության ծավալով առաջատարը ջերմաէներգետիկան է (2/3-ը), ամենահզոր ջէկ-ը **Սուրգուտինն** է՝ 4,8 մլն կվտ հզորությամբ: ՌԴ ջէկ-երի առավելությունն այն է, որ դրանց հիմնական մասը կարող է աշխատել վառելիքի տարբեր տեսակներով՝ ածխի, տորֆի, այրվող թերթաքարերի, գազի թափոնների բազայի վրա:

Վառելիքային այն ռեսուրսները, որոնց էներգետիկ արժեքը ցածր է, տնտեսապես և էկոլոգիապես շահավետ չէ հեռու տարածություններ տեղափոխելը (**ինչու՞**), ուստի ջէկ-երը կառուցվում են դրանցով հարուստ շրջաններում (Կուզբաս, Կանսկ-Աչինսկ), իսկ բարձրորակ վառելանյութը (բնական գազ, մագուիթ) տեղափոխվում է առավել մեծ պահանջարկ ունեցող շրջաններ, օրինակ՝ Ռուսաստանի եվրոպական կենտրոն:

• • •

Ռուսաստանի արդյունաբերության առաջատար ձյուղերից է **մետաղաձուլությունը**: Այն մի հզոր համալիր է, որի կազմի մեջ մտնում է սև (թուջի, պողպատի ձուլում, երկաթի համաձուլվածքների ստացում) և գունավոր մետաղաձուլությունը (գունավոր մետաղների ձուլում, համաձուլվածքների ստացում): Մետաղների 90%-ը մատակարարում է սև մետաղաձուլությունը: Մետաղաձուլության ձյուղերի տեղաբաշխման վրա ազդում են մի շարք գործոններ. հանքաքարի արդյունահանման շրջանների մոտիկությունը (**Նորիլսկ, Ուրալ**), կոքսացող ածխի հանքավայրերի (Կուզբաս) կամ էներգատար ձյուղերի համար էժան էլեկտրաէներգիայի աղբյուրների մոտիկությունը (**Արևելյան Սիբիր**) և այլն:

• • •

Բազմաձյուղ գունավոր մետաղաձուլական շրջան է **Ուրալը**, որտեղ ձյուղը զարգացել է ինչպես տեղական, այնպես էլ՝ բերովի հանքանյութերի բազայի վրա: Կենտրոնական շրջանի հյուսիս-արևմուտքում՝ Կոլա-Կարելիայի շրջանում, տեղական հումքից ստանում են նիկել: Ալյումինի հումք արդյունահանվում է **Խիբինից**:

Սիբիրի հարավը ՌԴ ալյումինաձուլական խոշոր շրջան է (80%): ձյուղի զարգացման բարձր մակարդակը պայմանավորված է ոչ միայն հումքային բազայով, այլև աշխարհի խոշոր ջրէկ-ների (**թվարկեք մի քանիսը**) առկայությամբ, քանզի ալյումինաձուլությունը շատ էներգատար է:

• • •

Կարտոֆիլի մշակությունը կենտրոնացված է երկրի եվրոպական մասի կենտրոնական շրջաններում (90%): Այն անվանում են «երկրորդ հաց»: Կարտոֆիլի համախառն բերքով ՌԴ-ն աշխարհում երկրորդն է՝ Չինաստանից հետո:

Խոշոր քաղաքների հարևանությամբ մերձքաղաքային տնտեսություններում զարգացած է բանջարաբուծությունը:

Այգեգործությունը և խաղողագործությունը զարգացած են երկրի հարավային շրջաններում:

Ընդարձակ տարածքի և ծովային խոշոր տերություն լինելով պայմանավորված՝ ՌԴ-ի տրանսպորտն ունի առանձնահատուկ նշանակություն: Թեև ՌԴ-ն ունի տրանսպորտային հզոր ցանց, բայց այն չափազանց անհամաչափ է բաշխված. ասիական մասում շատ նոսր է, իսկ հսկայական տարածքների վրա ձանապարհներ առհասարակ չկան:

• • •

Քանի որ երկրի սահմանների մոտ 2/3-ը ծովային են, բեռնափոխադրումների մեջ մեծ է նաև **ծովային** տրանսպորտի դերը: Այս տեսակը ամենաէժեքն է, քանի որ օգտագործում է բնական, համեմատաբար ուղիղ ձանապարհներ, իսկ նավերն ունեն մեծ բեռնատարողություն (ի՞նչ բացասական կողմեր ունի այս տեսակը): Սևծովյան նավահանգիստներից՝ Նովոռոսիյսկից հիմնականում նավթ են արտահանում:

• • •

Գետային տրանսպորտի դերը հատկապես մեծ է այն շրջաններում, որոնցով հոսում են ջրառատ գետեր, իսկ ցամաքային ձանապարհների կառուցումը շատ միջոցներ և ժամանակ է պահանջում: ՌԴ նավարկելի գետային ուղիները պատկանում են տարբեր ավազանների: Հիմնականը **Վոլգա-Կամա** ուղին է, որի շուրջը ձևավորվել է երկրի առավել զարգացած տնտեսական գոտին: Գետերի նավարկելիությունը մեծացնելու նպատակով կառուցվել են մի շարք ջրանցքներ՝ **Մոսկվայի, Վոլգա-Դոնյան, Վոլգա-Բալթյան, Սպիտակ ծով-Բալթյան**: Գետային տրանսպորտով նպատակահարմար է տեղափոխել փայտանյութ, շինանյութ, նավթ, ցորեն (ուշ փչացող մթերքներ), **ինչու՞**:

• • •

Տնտեսության զարգացմանը նպաստել են Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի

քաղաքային ագլոմերացիաներում և մի շարք այլ քաղաքներում ստեղծված համալսարանական, գիտակրթական, տեխնոլոգիական կենտրոնները, գիտաարտադրական համալիրները՝ **տեխնոպոլիսները** և **տեխնոպարկերը**, որոնցում պատրաստվել են բարձր տեխնոլոգիաների տիրապետող կադրեր: ՌԴ-ն ունի բարձր **ՄՆԶՅ (մարդկային ներուժի զարգացման ցուցիչ)**: Անվանում են նաև **ՄՆՀ (մարդկային ներուժի համաթիվ)**:

• • •

Մեքենաշինության գիտատար ճյուղերը և արտադրությունները (ավիահիթիռաշինություն, էլեկտրոնիկա, ռադիոտեխնիկա, ատոմային էներգետիկա) տեղաբաշխված են այն շրջաններում և կենտրոններում, որոնք ունեն բարձր զարգացած գիտական բազա, խոշոր գիտահետազոտական ինստիտուտներ (ԳՀԻ), կոնստրուկտորական բյուրոներ, փորձարարական գործարաններ՝ **Մոսկվա** և **մերձմոսկովյան շրջաններ**, **Սանկտ Պետերբուրգ**, **Եկատերինբուրգ**, **Նովոսիբիրսկ** և այլն: Սակայն սրանց բաժինը ՌԴ մեքենաշինության մեջ փոքր է՝ 20%:

• • •

Զինված ուժերին նորագույն ռազմական տեխնիկա, զինամթերք մատակարարող գործարանները կառուցվել են պետական սահմանից հեռու (ինչու՞):

• • •

Գազի արդյունահանմամբ երկրորդ տեղում Օրենբուրգի շրջանն է: Հանքավայրերում կան նաև էթան, պրոպան, բութան և այլ արժեքավոր հանքանյութեր: Օրենբուրգի գազի հանքավայրի մոտ կառուցվել են վերամշակման ձեռնարկություններ: Գազամատակարարումը Ռուսաստանում իրականացվում է 150 հազ. կմ ձգվածություն ունեցող միասնական խողովակաշարային համակարգով: Խոշորները ձգվում են Ուրենգոյից և Օրենբուրգից:

• • •

Կանսկ-Աչինսկի ավազանի ածուխն ունի ցածր ինքնարժեք և ցածր որակ (կալորիականություն, ջերմային գործակիցը 0,5 է), այդ իսկ պատճառով տեղափոխումը մեծ տարածությունների վրա շահավետ չէ, ուստի օգտագործվում է հիմնականում Սիբիրի ջերմաէլեկտրակայաններում:

Պեշորայի ավազանը հարուստ է բարձրորակ ածխով (1/3-ը՝ կոքսացող), սակայն արդյունահանումը իրականացվում է բարդ կլինայական պայմաններում: Ավազանը հեռու է սպառման հիմնական շրջաններից, ուստի ապահովում է երկրի եվրոպական մասի հյուսիսի պահանջարկը: ՌԴ-ն էլեկտրաէներգիայի արտադրությամբ (1,2 տրլն կվտ) աշխարհում 5-րդն է՝ Չինաստանից, Հնդկաստանից, ԱՄՆ-ից և Ճապոնիայից հետո:

Ձեկ-ի հատուկ տեսակ է ջերմաէլեկտրակենտրոնը, որը, բացի էլեկտրաէներգիան, արտադրում է նաև տաք ջուր և գոլորշի (ջերմային էներգիա): Այս էլեկտրակայանները տեղաբաշխված են խոշոր քաղաքներում, քանզի ջերմության հաղորդումը հնարավոր է 20-30 կմ հեռավորության վրա:

• • •

Ուրալյան բազալի երկաթաքարի խոշոր հանքավայրը **Կաչկանարն** է (երկրի պաշարների 25%-ը), որտեղ հանքաքարում երկաթի միջին պարունակությունը 47% է: Մետաղաձուլական խոշոր կոմբինատներ կան **Նիժնի Տագիլում, Մագնիտագորսկում, Չելյաբինսկում, Նովոտորոիցկում:**

Կենտրոնական մետաղաձուլական բազալի խոշոր կանքավայրը ԿՄԱ-ն է: Մետաղաձուլական խոշոր կենտրոններ են **Չերեպովեցը, Լիպեցկը, Ստարի Օսկոլը:**

Սիբիրական բազալի մետաղաձուլական խոշոր կոմբինատները **Նովոկուզնեցկում** են:

Գունավոր մետաղաձուլությունը շատ բազմաձյուղ է: Գունավոր մետաղների թիվը մոտ 70 է: Չնայած ձյուղի արտադրանքի ծավալը զգալիորեն զիջում է սև մետաղաձուլությանը, այդուհանդերձ գունավոր մետաղները շատ ավելի լայն կիրառություն ունեն արդյունաբերության մեջ (հատկապես ժամանակակից ձյուղերում՝ տիեզերական, ատոմային, ռադիոէլեկտրոնային և այլն): ՌԴ-ն գունավոր մետաղների շատ հանքատեսակների համաշխարհային պաշարներ ունի:

• • •

Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, վերամշակումը և մանրի արդյունաբերությունը փոխկապակցված ձյուղերի մի հզոր համալիր է, որն անվանում են **ագրոարդյունաբերական համալիր**: Գյուղատնտեսության զարգացման բնական հիմքը հողն է, որի կարևոր հատկանիշը բերրիությունն է: Չնայած ՌԴ հողային ֆոնդը 1,7 մլրդ հա է (աշխարհում առաջինը), բայց դրա ընդամենը 13%-ն են կազմում գյուղատնտեսական հանդակները (**վերհիշեք հասկացությունը**), թեև վարելահողերը կազմում են հողային ֆոնդի

ընդամենը 7%-ը, 1 շնչին բաժին ընկնող ցուցանիշը ՌԴ-ում բարձր է (ինչու՞):

• • •

Երկաթուղիների երկարությունը 86 հազ. կմ է, ինչը պայմանավորված է տարածքի մեծ ձգվածությամբ թե՛ հյուսիսից հարավ, թե՛ արևելքից արևմուտք: Եվրոպական մասում երկաթուղագծերի կոնֆիգուրացիան նման է հսկա անիվի, որի կենտրոնը Մոսկվան է: Դեպի արևելք ձգվում են աշխարհի մասշտաբով խոշոր մայրուղիներ: